Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 25-ի N 1611 - Ն որոշման

Օրինակելի ձև

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

_____ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան ----------

Հայաստանի Հանրապետության _____ - ը, ի դեմս _____ -ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից (այսուհետ՝ պետական մարմին), և _____ ծրագրերի իրականացման գրասենյակը (այսուհետ՝ ԾԻԳ), ի դեմս _____ -ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պետական մարմինը ԾԻԳ-ին է փոխանցում «Գնումների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 853-Ն որոշման (այսուհետ՝ կառավարության որոշում) իմաստով «պատասխանատու ստորաբաժանմանե իրավասություններն ամբողջ ծավալով, ինչպես նաև «պատվիրատուիե և «պատվիրատուի ղեկավարիե հետևյալ իրավազորությունները՝

ա. _____

բ. _____

_____

2. ԾԻԳ-ը սույն համաձայնագրի 1-ին կետով սահմանված իր իրավասությունների սահմաններում պատասխանատվություն է կրում պետական մարմնի տարեկան աշխատանքային ծրագրով և նպատակներով նախատեսված ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման գործընթացի կազմակերպման և պատշաճ իրականացման, այդ թվում նաև՝

ա. գնման առարկայի բնութագրի կազմման,

բ. մրցութային հանձնաժողովների կազմավորման,

գ. գնման պայմանագիր կնքող անձի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ընտրության, նրա հետ համաձայնագրի կնքման և գնման պայմանագրի կատարման նկատմամբ նախնական ու ընթացիկ վերահսկողության իրականացման համար։

3. Գնման առարկայի բնութագիրը՝ տեխնիկական հատկանիշները, գնման ժամանակացույցը, վճարման ժամանակացույցը, արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության մեկ միավորի սահմանված գինը, պայմանագրի շրջանակներում արտադրման, ներմուծման կամ արտահանման ենթակա ապրանքների, կատարման ենթակա աշխատանքների, մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակը և դրա փոփոխման պայմանները, արտադրվող, ներմուծվող կամ արտահանվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նվազագույն շահավետ գինը կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում մշակվում են ԾԻԳ-ի կողմից և ներկայացվում պետական մարմնի հաստատմանը։ Գնման առարկայի բնութագիրը կցվում է գնման պայմանագրին և դրա անբաժանելի մասն է։

4. ԾԻԳ-ը պարտավոր է սույն համաձայնագրի շրջանակներում պետական մարմնին տրամադրել բոլոր հնարավոր և պատշաճ կազմված փաստաթղթերը, տեղեկությունները, որոնք անհրաժեշտ կլինեն «Գնումների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի և կառավարության որոշման շրջանակներում պետական մարմնի

կողմից պետական լիազոր մարմիններին հաշվետվություններ կամ օրենքով պահանջվող այլ փաստաթղթեր ու տեղեկատվություն տրամադրելու համար։

5. Պետական մարմինը պարտավորվում է կառավարության որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի N 48 որոշմամբ սահմանված ընթացակարգով և ժամկետներում գնման դիմաց վճարում, այդ թվում՝ նաև կանխավճար ստանալուց հետո _____ բանկային օրվա ընթացքում այն փոխանցել ԾԻԳ-ի _____ հաշվին, եթե ԾԻԳ-ը պահպանել է սույն պայմանագրի 6-րդ կետի կանոնները։

Սույն կետով սահմանված փոխանցման ժամկետների չպահպանման դեպքում պետական մարմինը պարտավոր է հատուցել դրա հետևանքով ԾԻԳ-ին և գնումների համաձայնագիր կնքած անձին պատճառված վնասները՝ բացառությամբ սույն համաձայնագրի 6-րդ կետով սահմանված դեպքերի։

6. Եթե պետական մարմնին գնման դիմաց վճարման տրամադրման համար «Գնումների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի, կառավարության համապատասխան որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի N 48 որոշման իմաստով անհրաժեշտ են որոշակի փաստաթղթերի առկայություն, այդ թվում՝ հանձնման-ընդունման ակտերի առկայություն, ապա ԾԻԳ-ը պարտավոր է կառավարության համապատասխան որոշման շրջանակներում իրեն սույն համաձայնագրի 1-ին կետով պատվիրակված պարտականությունների շրջանակներում պետական մարմնին տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը։

Ամեն դեպքում, գնման դիմաց վճարում, իսկ այն դեպքերում, երբ վճարումը կատարվելու է պարբերաբար, ապա յուրաքանչյուր վճարման մասն ստանալու համար ԾԻԳ-ը պետք է պետական մարմին ներկայացնի մանրամասն հաշվետվություն, որը ցույց է տալիս տվյալ պահին ԾԻԳ-ի կողմից իր համաձայնագրային պարտավորությունները պատշաճ և լիովին կատարած լինելու հանգամանքը։ Սույն կետի պահանջների

չպահպանումը կարող է հիմք հանդիսանալ գնման դիմաց վճարումը ԾԻԳ-ին չփոխանցելու համար։

7. ԾԻԳ-ը պարտավոր է ապահովել, որպեսզի գնման համաձայնագիր կնքած անձը պատշաճ կերպով կատարի իր համաձայնագրային պարտավորությունները։ Անհրաժեշտության դեպքում ԾԻԳ-ը պետք է ձեռնարկի օրենքով նախատեսված բոլոր հնարավոր միջոցները՝ գնման համաձայանագրի պատշաճ և ժամանակին կատարումն ապահովելու համար։

8. Պետական մարմինն իրավունք ունի ցանկացած ժամանակ ԾԻԳ-ից պահանջելու իրեն ներկայացնել գնման պայմանագրի կատարման հետ կապված ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաև հնարավորություն ունենալ անմիջականորեն հետևելու գնման պայմանագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին։

9. Սույն համաձայանգրի դրույթները որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել որպես արգելք գնումների բնագավառի պետական լիազոր մարմնին և (կամ) «Պետական գնումների գործակալությունե պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել օրենքով իրենց վերապահված իրավասությունները, այդ թվում՝ նաև վերահսկողության առումով։

10. ԾԻԳ-ի տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառած վնասի համար։ ԾԻԳ-ի տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ սույն ծրագրի իրականացման ընթացքում պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար։

11. Սույն համաձայանգրի պայմանների չպահպանման դեպքում պետական մարմինն իրավունք ունի՝

1) ԾԻԳ-ին չվճարելու գնման դիմաց, գրավոր հիմնավորելով չվճարման պատճառները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու գրավոր միջնորդություն՝ ԾԻԳ-ի տնօրենի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու համար։

Սույն կետում նշված պատասխանատվության միջոցի կիրառումը ԾԻԳ-ի տնօրենին չի ազատում սույն համաձայնագրի 10-րդ կետով սահմանված պատասխանատվությունից։

12. Սույն համաձայանգիրը կնքվում է չորս օրինակից՝ հայերենով։ Յուրաքանչյուր կողմի մոտ պահվում է համաձայանգրի մեկ օրինակը, իսկ մեկական օրինակներ ուղարկվում են համապատասխանաբար լիազոր մարմին և «Պետական գնումների գործակալությունե պետական ոչ առևտրային կազմակերպությանը։ Սույն համաձայնագրում փոփոխությունները կատարվում են կողմերի գրավոր համաձայնության հիման վրա։

Կողմերի վավերապայմանները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ